

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հարարազը Նորհրդային Հայաստանին վերամիացնելու առաջարկութիւնը առաջին անգամ համապատասխան մարմիններու փոխանցուծցաւ Հարարազի հայութեան կողմէ: Լեռնային Հարարազի ինճնավար մարզի խորհրդարանը, իր 20-րդ արտահերթ նիստի ընթացքին որոշում կայացուցած էր միանալու համար Հայկական հանրապետութեան:

Հարարազի պաշտօնական այս որոշումը նկատի ունենալով, Նորհրդային Հայաստանի Գերագոյն Նորհուրդը (խորհրդարան) 15 Յունիսի նիստին, իր հերթին պաշտօնապէս իւրացուց Հարարազի ինճնավար մարզի գերագոյն և իրաւասու Մարմնի որոշումը ու պատաստանկամութիւն յայտնեց հայկական այդ պատմական շրջանը ընդունելու իր կազմին մէջ:

Մինչ այս որոշումը, Երևանի մէջ կրկին տնդի ունեցան բազմահազարանոց ցոյցեր և պահանջեցին պատմական անարդարութեան սրբագրումը:

Սուրէն Յարութիւնեան, Կենտկոմի ետր Առաջին Բարտուղար ընտրուելէն ծտք, առաջին անգամ ըլլալով ցոյցերու առիթով ծլոյթ ունեցաւ ժողովուրդին առջնու և յայտնեց, թէ ինճ շանճ պիտի չի նայէ արդարութիւնը տնդը բծրելու համար:

Հայաստանի Գերագոյն Նորհուրդի որոշումը կարծւոր իրադարձութիւն է և դրական անդրադարձ կրնայ ունենալ Հարարազի հարցին լուծման համար, կամ առնուազն, հայկական պետականութեան կամըր պաշտօնապէ՛ս կ'արտացոլացնէ: